

Կ-405³-27.11.2013,21.10.2014-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ»

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 99-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը «կազմակերպում է» բառից հետո լրացնել «սոցիալական աջակցության (ծառայությունների) տրամադրումը և տեղական ինքնակառավարման մարմինների» բառերը, հանել «, իրականացնում է սոցիալական աջակցության տրամադրման և նպաստների նշանակման աշխատանքներ» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային ժողովում 2014 թվականի դեկտեմբերի 1-ին առաջին ընթերցմամբ ընդունված՝ «Սոցիալական աջակցության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի կապակցությամբ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ /024 ընտրատարածք/ ԱՐՄԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ /077 ընտրատարածք/ ՎՐԵԺ ՄԱՐԿՈՍՅԱՆ /014 ընտրատարածք/ ՌՈՒԲԵՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ /006 ընտրատարածք	«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի 21-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի վերջում վերջակետից առաջ լրացնել «և որպես ծրագիր ընդգրկում հաջորդ տարվա պետական բյուջեում» բառերով: Հիմնավորում: Առաջարկության նպատակը սոցիալական աջակցության պատվերի (կարիքի) ձևավորումը տարեկան բյուջեներում ավելի հստակ արտահայտված ունենալն է:	Ընդունվել է, որոշակի խմբագրմամբ	Առաջարկվող փոփոխությունը կատարվել է հետևյալ լրացմամբ «եւ համապատասխան ծրագրերն ընդգրկում հաջորդ տարվա պետական բյուջեում»:
ՀՀ կառավարություն	«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6)-րդ	Ընդունվել է	Նախագծի 13-րդ հոդվածի 4-րդ մասը լրացվել է նոր 6)-րդ կետով:

	կետով. «6) սույն մասի 1-5-րդ կետերում չնշված՝ սոցիալական սպասարկում իրականացնող այլ կազմակերպություններում, կենտրոններում, հիմնարկներում, խնամատար ընտանիքներում:»:		
ՀՀ կառավարություն	«Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի նախագծի 13-րդ հոդվածի 6-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 4)-րդ կետով. «4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված՝ բնակչության սոցիալական պաշտպանության այլ տիպերի:»:	Ընդունվել է	Նախագծի 13-րդ հոդվածի 6-րդ մասը լրացվել է նոր 4)-րդ կետով:
ՀՀ կառավարություն	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետում նշված «բժշկական վերականգնում» բառերը փոխարինել «վերականգնողական բժշկական օգնություն և սպասարկում» բառերով՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 27-ի N276-Ն որոշման պահանջները.	Ընդունվել է	Նախագծի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը խմբագրվել է
ՀՀ կառավարություն	Նկատի ունենալով, որ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ	Ընդունվել է	Նախագծի 13-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը խմբագրվել է

	ընդունվել է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը (Կ-298-15.07.2013-ԱՄ-010/0)՝ նախագծի 13-րդ հոդվածում 3-րդ մասի 1-ին կետում պալիատիվ (ամոքիչ) բժշկական օգնության սահմանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1)պալիատիվ բժշկական օգնությունը կյանքին վտանգ սպառնացող կամ անբուժելի հիվանդություն ունեցող հիվանդի և նրա ընտանիքի կյանքի որակի բարելավմանն ուղղված բժշկական օգնության և սպասարկման տեսակ է, որը նպատակ ունի մեղմել հիվանդի ցավը և հիվանդության հետ կապված ֆիզիկական, սոցիալ-հոգեբանական, հոգևոր և այլ խնդիրները՝ դրանք վաղ հայտնաբերելու, գնահատելու և անհրաժեշտ միջամտություններ իրականացնելու միջոցով».		
ՀՀ կառավարություն	Նախագծի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 7-րդ կետում «ստացիոնար բժշկական» բառերը փոխարինել «հիվանդանոցային բժշկական օգնություն և սպասարկում	Ընդունվել է	Նախագծի 13-րդ հոդվածի 8-րդ մասի 7-րդ կետը խմբագրվել է

	իրականացնող» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:		
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում հստակ թվարկվում են հիմնական պահանջմունքներ համարվող նվազագույն պայմանները: Այս կապակցությամբ հստակեցման կարիք ունի «և այլն» բառակապակցությունը, քանի որ պարզ չէ, թե վերջինս իրենից ֆիզիկական անձի կեցության համար ինչ նվազագույն այլ պայմաններ է ենթադրում:	Ընդունվել է	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը խմբագրվել է
ՀՀ կառավարություն	Նախագծի 46-րդ հոդվածի 1-ին մասն անհրաժեշտ է խմբագրել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի պահանջները:	Ընդունվել է	Նախագծի 46-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրվել է